БЕССМЕРТНЫЙ ПОЛК

ԱՆՄԱՀ ԳՈՒՆԴ

N13 13.04.2023

Հեռ. +374 33 00 19 45
Էլ.փոստ: bessmertnipolkarmenii@mail.ru
Հասցե՝ ք.Երևան – 0070, Վարդանանաց փ, շ.15/4

Երևանի քաղաքապետի պաշտոնակատար
պարոն ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

Ս.թ. մայիսի 9-ին նախատեսում ենք իրականացնել Երկրորդ Համաշխարհային Պատերազմում մեր նախնիների հաղթանակի 78-րդ տարեդարձին նվիրված միջոցառում՝ <<Անմահության Գնդի>> քայլերթով դեպի Հաղթանակ զբոսայգի:

Քայլերթի մասնակիցները /3.000-5.000 մարդ/ մայիսի 9-ին, ժամը 10.00-ին կհավաքվեն Երևանի Արաբկիր համայնքի Սուրբ Խաչ եկեղեցու բակում, որտեղից ժամը 12:30-ին, <<Անմահ Գնդի>> կազմում հաղթանակած մասնակիցների լուսանկարները ձեռքներին, դրոշներով և պաստառներով, մոտավորապես հարյուր կարգադրիչի ուղեկցությամբ, Ազատության պողոտայով կշարժվեն դեպի <<Հաղթանակ>> զբոսայգի՝ մասնակցելու անմար կրակի մոտ ժամը 13:00-ին նախատեսված տոնական միջոցառմանը, որ կավարտվի ժամը 14:00-ին:

Սույն գրությամբ իրազեկում ենք Ձեզ <<Անմահ Գնդի>> քայլերթի մասին և, միաժամանակ, խնդրում ժամը 12:30-ից մինչև 13:00-ն դադարեցնել ավտոմեքենաների երթևեկությունը Ազատության պողոտայում, ինչպես նաև ապահովել երթի մասնակիցների անվտանգությունը Երևան քաղաքի ոստիկանության և շտապ բուժօգնության ծառայությունների միջոցով:

Հարգանքով՝

<<Անմահ Գունդը Արտասահմանում>>

պատմամշակութային հասարակական կազմակերպության

գործադիր տնօրեն

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ